ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ:gnumner.kanach@yerevan.am

Ք. Երևան 16 հունվարի 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԾԱԾԿԱԳԻՐ՝ ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-23/02

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Լիմետ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մատակարար) միջև 2023 թվականի մարտի 2-ին կնքված ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-23/02-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Մատակարարը պարտավորվել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և նշված հասցեով մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները: Ընկերությունը խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ ամբողջությամբ չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.7-րդ կետի պահանջներով՝ միակողմանի (մասնակի) լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի հունվարի 9-ին և Պայմանագիրը հունվարի 10-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ «Լիմետ Գրուպ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԲԵԳՈՅԱՆ